



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Receipt

of my slip

1902

391.99

U-52

X

12

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

22.9.

h l

10544

u-391

8 0 L F 6 P

L.R.C.

~~10544~~

~~10544~~

7

- 6 NOV 2011

891.99
U-52

ՋԱՊԷԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ
(ՍԻՊԻԼ)



Յ Ո Ղ Ի Ե Ր

~~U-34~~
U-34

17571



av/373

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍՅԱՆ

1902

50K.

14-2

31 JUL 2013

55765

Մ Օ Ր Ս

Զ Ե Ր Ա Ց Է Թ Խ Ա Ն Ճ Ծ Ա Ն Ի


Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն



938
41



Յ Ո Ւ Ք Ե Ր



Ա Մ Պ Ը ^X

ԱՄՊ լուսեցին, ուր երազներս ապրեցան,
— երկիրին մէջ, լուսին աշխարհն արծաթի.—
Ու բեզի հետ փրշրած կ'իյնան ցիր ու ցան.
Այդ փըշրանքէն տաք տաք արցունք կը կաթի:

Բաժնըւելով քու շողերէդ մըտերիմ,
Հովերու բիրտ հարուածին տակ կը փըրժիս.
Կեանքդ երկինքն էր. հողը կ'ըլայ բեզ շիրիմ,
Ուր թաղուեցան հուր տենչանքներն իմ սըրտիս:

Եւ կը ժըպտին վերէն արևն ու եթեր
 Մեր վիշտերուն անկարեկիր ու անխոթ,
 Փայլայելով թևերնուն մէջ նոր ամպեր,
 Նոր սարսուռներ ու երազներ ջինջ կապոյտ.

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝
 Անձրև կու լաս դուն, ես՝ արցունք ցաւազին:

1892



Ս Օ Ս Ի Ն Տ Ա Կ

ԿԸ ՄԱՐԷՐ յետին ճաճանչն արեւուն
 Լեռներուն կողջն ինկած մինչև ծով,
 Երբ ծաղկահաս մաշն յուզմամբ սարսըռուն՝
 Կը խօսէր անոր իր հողւոյն բոցով:
 Կը մարէր յետին ճաճանչն արեւուն.

Հովանւոյն ներքև սօսին դարաւոր
 Տալով կաթողին իր յետին համբոյր,
 Այրը կը մեկնէր յանձնելով անոր
 Չըքնաղ մանկիկ մը խաբտեաշ վարդարոյր,
 Հովանւոյն ներքև սօսին դարաւոր:

«Մի՛ լար, միշտ յիշէ մեր բաղցրիկ օրերը,
 Կ'ըսէր ցաւաղին հայրը մըտահող,
 Դուն Արէլն ունիս, իր ժըպիտն ու սէր
 Կըրնան ըսիտիւն թախիժդ ու մորմոքը
 Մի՛ լար, միշտ յիշէ մեր բաղցրիկ օրերը»

«Ես ձեզմէ հեռու կ'երթամ տարազիր.
 Թ'նդ որ նայուածքէդ բաղեմ քիչ մը ոյժ.
 Որդիս շատ սիրել ինձի խոստացիր
 Որ հողի առնեմ քու ձայնէդ անոյշը
 Ես ձեզմէ հեռու կ'երթամ տարազիր»

Հըրուտ աչքերը արցունքով լեցուն՝
 Ձայնով մը նըւաղ, հազիւ լըսելի,
 «—Կ'երդնում թէ, ըսաւ, կեանքս, հողիս համբուն
 Պիտի նըւիրեմ որդւոյս և քեզի»
 Հըրուտ աչքերը արցունքով լեցուն»

Մինչ հայրն այդ ուխտին վըրայ կը ցընձար
 Դուժկան կառայ մը թըռնաւ ահարկու
 Յանկարձ կատարէն սօսին բարձրածայր,
 Բու մը ըսկըսաւ հեծել. «Հնւ, հնւ, հնւ»
 Մինչ հայրն այդ ուխտին վըրայ կը ցընձար

Մուժը զիշերուան կ'իջնէր լեռնէն վար.
 Իր ձիով ճերմակ սլ անհետացեր՝
 Մեկներ էր արդէն հայրը սըրաւար,
 Դեռ կը լըսուէին սև բուխն կոծերը
 Մուժը զիշերուան կ'իջնէր լեռնէն վար»

* * *

Հովանւոյն ներքև դարաւոր սօսին
 Մայրը իր որդւոյն հետ նըստած մինակ՝
 Կը դիտէր տըմոյն հուսկ ցոլքը լոյսին,
 Որ կ'երթար պահուիլ լուրժ ծովուն յատակը
 Հովանւոյն ներքև դարաւոր սօսին»

Առոյգ տըղայ մ'էր Արէլն ալ հիմակ,
 Հասակը իր մօր կը հասնէր ուսին
 Միրտը կըրակ էր, ինքը բոց համակ՝
 Աղուոր էր դէմքն ալ զերթ պայծառ լուսին
 Առոյգ տըղայ մ'էր Արէլն ալ հիմակ»

«—Մայր, կ'ըսէր, ինչո՞ւ հայրիկս ուշացաւ.
 Տես ըստուերները դաշտին մէջ լեցան
 Երթանք քեզի հետ ձոր, դաշտ ու անձաւ,
 Նայինք, կորանցնոց արդեօք իր ճամբան
 Մայր, կ'ըսէր, ինչո՞ւ հայրիկս ուշացաւ»

«— Համբերէ բիչ մ'ալ, Աբէլս իմ սիրուն,
Պատասխան կու տար մայրիկն անկասկած.
Ա՛լ պիտի չողբանք բեզ հետ օրն ի բուն,
Զի հօրըդ դարձին վայրկեան մը մընաց:
Համբերէ բիչ մ'ալ, Աբէլս իմ սիրուն»

Զուարթ էր սիրտն ալ ճիշդ իր դէմքին պէս,
Քանզի կը սպասէր սիրելոյն դարձին,
Եւ ինչ պարծանքով, ինչ հաճոյքով վէս
Կ'երազէր ցոյց տալ անոր իր որդին:
Զըւարթ էր սիրտն ալ ճիշտ իր դէմքին պէս:

Բայց տըղուն սիրտը յուզմունքով կ'եռար,
Եւ չուզէց լըսել խընդրանքն իր մօրկան,
Ելաւ բարձրաբերձ այն սօսին կատար
Տեանելու համար հայրը սիրական:
Զի տըղուն սիրտը յուզմունքէն կ'եռար:

«Ա՛խ, մայրիկ, զոչեց ծառին զազաթէն,
Կարաւան մ'ահա կու գայ դէպ ի մեզ,
Շատ ձիաւորներ շուտ շուտ կը դրողեն.
Հայրիկս ալ հետ է, եկնուր որ տեսնես:
Ա՛խ, մայրիկ,» զոչեց ծառին զազաթէն:

Հօրը կարօտէն հողին սիրարձարժ
Փռածաց կազնիկն իջնել հե ի հե,
Ոտքը սահեցաւ, վար ինկաւ յանկարծ,
Փըշրեցաւ զանկը ժայռերուն վերև:
Հօրը կարօտէն հողին սիրարձարժ:
.....

Մռթը զիշերուան կ'իջնէր լեռնէն վար,
Անտառին խորէն իր ձիով ճերմակ
Հայրն ուրախ զըւարթ հասաւ սըրավար
Գըրկելու յոյսով իր սիրուն զաւակ:
Մռթը զիշերուան կ'իջնէր լեռնէն վար:

Հովանոյն ներքև սօսին դարաւոր,
Մայրն, որ խելայեղ լալով կը ծասար,
Յուցուց խեղճ հօրը իր զաւակն աղուոր
Ոսկրակոյտի մը եղած հաւասար,
Հովանոյն ներքև սօսին դարաւոր:

Եւ յանկարծ «հնւ, հնւ,» վայեց բուն վերէն,
Որ կանխաւ լացած էր մահը մանկան,
Մինչ խոյս կու տային հէք հօրն ալ սըրտէն
Սիրոյ, հըրճուանքի երազներն այնքան.
Ու դարձեալ «հնւ, հնւ,» վայեց բուն վերէն:



Մ Ե Ն Ա Ս Տ Ա Ն Ի Ն Կ Ո Ց Ս Ը

ԿէՍ գիշեր է. սենեակիս մէջ միայնակ՝
կանթեղ չունիմ, ոչ ալ երկինքն ունի շող-
հր լոյսն յետին մարեց զարոյսան ու տընակ.
Եւ մընացի իմ խոհերուս հետ մաշող:

Կը թափառին շուրջս ըստուերներ թանձրահոծ
Մերձենալով հեռանալով յամրաբար,
Եւ կը լըսեմ իրենց վայելնն ողբակոծ
Երբ կանգ առնել կու գան յոգնած ու մոլար:

Տըխուր մըտքիս ուրուականներն են համակ,
Յընորք հողոյս հազիւ հասած արբուների,
Եւ մինչ կ'անցնին օրերըս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կու տան ինձ ըսիտիանքն արցունքի:



Զի մինակ եմ հոս գէմբերու հետ աըրտում,
 Կոյսերու հետ, որոնք չունին խճ ու խանդ,
 Որոնց ձայնին վանկերն՝ աղօթք անպատում՝
 Կը խորտակեն երազս ու յոս մանաւանդ:

Ազրիլ կ'ուզեմ. անոնք երկինք ցոյց կու տան:
 Սիրել կ'ըղձամ. կը գոչեն. «Սէր է Աստուածս»
 Եւ կը պատմեն Դաւիթը, Յոբն ու Յուդան.
 Կ'ըսեն. «Միայն մահուան համար ենք հաստուածս»

Զո՛ւր կը վառէ երկինք արեւն ու լուսին,
 Զօնելով կեանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
 Ես կը դառնամ նորէն համեստ այն լոյսին
 Որուն ներքև լուռ կը հըսի՛ք աչք մ'արժունս:

Բոցեղ շունչ մը կը խընդրեմ ես, սիրտ մը տար
 Որ խառնուի տենդոտ հոգւոյս յորձանքին,
 Եւ Սաղմոս մը կը զընեն, ա՛հ, բարձիս տակ,
 Խաչ մ'ալ փայտէ ընդդէմ սըլտի փորձանքին:

Այդ փորձանքներն ես կ'երազեմ անդադար,
 Կեանքի բոչր մեծ պայքարներն, հուրն անհուն,
 Աշխարհի մէջ չընչին բաժինս իմ արդար,
 Եւ կը Քողում երկինքն իրեն ոտրբերուն:

1892



Ե Ր Կ Ի Ն Ք

Երկինքն անբաւ, ո՛վ էութիւն վեհ, անճառ,
 Երազտնիք անհաս, տեսիլ վըսեմ, սուրբ տաճար,
 Այն խորհուրդն ես գուն զոր հոգիս գեռ մատաղ՝
 Միշտ կը պաշտէր Քէ ալեկոծ, Քէ խաղաղ
 Դուն այն առանցքն ես, որուն շուրջ վաղվըզուն՝
 Կը թեւէին իմ ցընորքներս օդատուն,
 Եւ զըմբեթիդ վերև պայծառ ու շըբեղ
 Կը ժըպո՛ւր ինձ լոյսերու բոյլ մը բիւրեղ:
 Անոյշ պատկերդ ու գէմբդ աղբոր լուսավառ
 Ճառագայթներ կու տար սըլտիս իմ խաւար,
 Ինչպէս արիւոյն լուսաճաճանչ կարծիք շող
 Կը փարատէ հո՞մ ամպերուն սև ամբոխ,
 Որոնց ծոցէն խխտ խխտ շանժեր ու փայլակ
 Կը խոյանան ժայթքելով թօն ու կայլակ:
 Աւանդ, երբեր իմ ըղձանքիս չեղար խուլ,

Օրօրեցիք միշտ յոյսերով զիս խարխուլ,
 Արծարծելու համար տենչերս ու երազ,
 Ինչպէս կին մը որ կը պըջրի հեզանազ,
 Միշտ ցոյց տալով նոր հըմայքներ ու հրապոյր,
 Քեզ գերեցիք նոյն խակ միտքերն անհասրոյր,
 Ո՛հ, ի՛նչ ես դուն, ծնվ անմատոյց ու խորին,
 Ո՞ւր է արդեօք ըսկիզբդ ու ծայրըդ բուկին.
 Է՛նկ մըն ես արդեօք և կամ սին պատկեր,
 Պատրանք վաղանց, ինչպէս բոլոր վայելքներ,
 Մի՞թէ սուտ չէ ինչ որ խորհուրդ կը կոչեն.
 Բոլոր բոյրերն ու սէրերը պատրանք չեն,
 Եւ մեր սիրտը՝ յիմար մեղու, հէք մանկիկ,
 Ծաղիկներու շուրջ կը յածի թափառիկ,
 Կամ լուսատարի օդասլացիկ խօլ թի՞ծեո՛ւ
 Միշտ կը զոհուի բոցին որ զինք կը դիւծէր,
 Իսկ թէ էակ ես կամ ոգի, ո՛վ երկինք,
 Ունիս անշուշտ կիրքեր որով կը մըրկինք,
 Գիտես ինչպէս մուծին մէջ խեղճ միջասունք
 Կը փախաքին թեւել մինչև զագածներ,
 Գիտես ինչպէս կ'անձկան քեզի հասնելու,
 Թէ և խոնարհ, թէ և կամբիդ միշտ հըլու:
 Թէ լուսեղէն էակներու սիրոյն լոկ
 Բաց են սըրտիդ դըռներն ամուր անողոր,
 Եւ մեր աղօթքն ու պաղատանք եթէ պիղծ
 Քեզ կը թուին, նախ փարատէ մեր Պախիծ.
 Եւ յետոյ տես թէ լուսինէդ ալ աղուօր

Ձեն շողշողար մեր ճակատներ սըզաւոր,
 Այլ... կը ճանչնան ըզմեզ արդեօք, թէ դուն ալ
 Բուռն տենչով կ'ըզճաս մեզի մօտենալ,
 Եւ օրէնքին անաչառ ձեռքն երկամէ
 Ըզքեզ ամուր ցանցերու մէջ կը պատէ:
 Կը ճանչնան զիս, թէ կ'երեւամ քեզ անշունչ,
 Ինչպէս շիւղերն ու ցորեններն ոսկեփունչ,
 Որոնց շըրշիւնն ու ձայներուն նուրբ սարսուռ
 Մեզի համար յաւերժուծին մըն է լուռ:
 Այս խոհն, աւանդ, կը մըթագնէ կայծն հոգոյս,
 Կ'ուզեմ ըլլալ ես քու քերթուածդ արշալոյս,
 Կ'ուզեմ կեանքիս բոլոր ժամերն ու վայրկեան
 Գու ձեռքովդ խակ կազմեն անհուն, սուրբ մատենան,
 Ուր տենչանքներս քեզի համար վառվառին,
 Ինչպէս խունկը ծոցն ոսկեշող բուրվառին:
 Թո՛ղ, ո՛վ երկինք, թո՛ղ, կապուտակ դուն կամար,
 Ըզքեզ հոգոյս յուզուած ձայնով կոչեմ մայր,
 Եւ լուսնակդ ալ քոյր մ'ըլլայ ինձ կարեկից,
 Որուն պատմեմ բոլոր հոգերս ու կըսկիծ:
 Թո՛ղ որ նայիմ աղուօր դէմքիդ հրաշափառ,
 Եւ հիացման խոր ըզգացմամբն անբարբառ
 Ծունցի գալով աղաչեմ քեզ որ պարզես
 Խորհուրդներուդ անհաս, անբաւ ասպարէզ:
 Եթէ ժըպիրհ զիս համարիս սակայն միշտ,
 Բաղձանքս եթէ քեզ երեւայ ամբարշտ,
 Յիշէ թէ դուն մայր եղար ինձ, և թէ դուն

Ըտեղծեցիր այս զընծա կանն եռանդուն,
 Ի՛նչ մեծ իղձեր տուիր նիւթին այս չընչին
 Որ անոնցմով եղաւ էակն առաջինս
 Դուն ես որ միտքս անդադար բեզ կը ձըգես,
 Մարդն անդունդին հըրայրք չունէր առանց բեզ:
 Ծովուն ալքը, ծըմակին մէջ, վիհին խոր
 Ժայռին ծաւըն խակ կը հետեւիս դուն անոր:
 Անպարագիր տեսարանէդ ազդըւած,
 Ան ալ կ'ըղձայ անհուն ըլլալ, ո՛վ Ատուած:
 Եւ յանցանք է միթէ սուբալ ամպին հետ,
 Թըռչիլ մինչև արևներուն արահետ,
 Խընդրելու թև հրեշտակներէն, այգէն հուր,
 Ողիններէն զոնէ բառ մը հեշտալուր,
 Որուն ճաշակն երազներու մէջ անցաւ՝
 Իրեն ոսկի բաժակներով արուեցաւ:
 Սակայն, և թէ մեր աշխարհին չես դուն տէր
 Ու շանձարձակ ամպերէդ վար չես իջներ,
 Թէ չես տեսներ մեր կիրքերուն խօլ այիր,
 Թէ մեր տեսչեր բեզ կ'երեւան խաղալիք,
 Փըշո՛ք, ապա, մեր ըղձանքին խօլ թեւեր,
 Դէմքիդ վըրայ ձըղէ բողբու ու ըստուեր
 Եւ աշխարհի ցած իրերուն մէջ և եթ
 Թող ցընորքներս, տեսչս ու հողիս թաղուին զէթ,
 Իսկ դուն, երկինք, տարրերու մէջ անըզգայ
 Իշխէ յաւէտ, ուր ոչ բընար, ոչ սիրտ կայ:



Խ Ո Ւ Ն Կ Ը

Խ Ո Ւ Ն Կ Ը կը ձըլի խորանին առջին
 Բուրլաոխն մեղմիկ ճօճումովն արծաթ
 Մուխի վարանք մը սլըլըւած խաչին՝
 Մըշուշով կ'օծէ սուրբերուն ճակատ:

Պաղատանքներու սարսուռներ երկայն
 Կամարներուն տակ կը մտրին տակաւ,
 Մոմերու տըժգոյն բոցերը լալկան
 Բըժժող աչքերով կը հեւան կարդաւ:

Սուրբ սիւներուն մօտ շըղարշ մը ճերմակ
Գաղտուկ հեծքերու դողով կ'երևայ,
Միրտ մը փաթթըած ըստուերով համակ
Խունկին պէս լըռին հըրայրքով կ'եռայ:

Խունկը կը ցընդի բուրլառին ծոցէն
Ու եթերն ի վեր կ'ելլէ խոյանքով,
Նիւթ էր, բոյր կ'ըլլայ լափուերով բոցէն
Իր կեանքը ցօղուած լոյսի երանգով:

Հէք կընոջ սիրտն ալ, որ հոն կը մըլխայ,
Պիտի չազատի իր պատեանէն կուռ,
Մինչև որ հալի, լուծուի, տարրանայ
Լափուերով բոցէն տենչերուն մաքուր:

1901



Լ Ո Ւ Ս Ի Ն

ՈՂՋՈՅՆ կուտամ անհուն սիրով բեզի, լուսնակ,
Ո՛վ մըտերիմ տըխուր հոգւոյս իմ միայնակ,
Թէ չըլլա՛իր դուն, և շողերդ այդ փայլայուն
Զըշոյէին սըլացքն հոգւոյս երազներուն,
Փոս մը կ'ըլլար կեանքըս, թափուր և ամայի,
Փոս մ'որ մըռայլ դամբաններու լոկ կը նայի,
Որուն եզերքն ալ չի փըժժիր ծաղիկ և բոյս,
Ուր կը մոռնայ ցօղել արեւն իր արշալոյս:
Ու կ'անցնէի ըստուերի պէս կեանքին մէջէն
Քըշուերով հոն ուր կը հեծեն, կը հառաչեն,

Կամ նըւաղած կանթեղի պէս շիջելտիառ
 Կը կըբէի առէն հովի ես անբարբառ:
 Բայց դուն, լուսնակ, բանի վերէն ինձի ժըպտիս
 Մըտքիս թըռիչք, աւիւն և հուրք կու տաս սըրտիս.
 Բանի թողած շողերու հոյլն եթերածեմ
 Պատուհանիս առջին կու գաս երբ կ'աղաչեմ,
 Բու ըզգայուն, սիրող անոյշ սըրտիդ վըրայ
 Տաք արցունքով լեցուած՝ հողիս կը գուրգուրայ:
 Ո՛հ, հըբան բարձր ես, որբան սուրբ և ինչ վըսեմ,
 Շըշոյլներուդ ներքև Աստուածն ես կ'երազեմ.
 Տինգերբի ողբն ես դուն, թէ ոչ հայլին
 Որուն մէջէն սըրբութիւններ կ'արտախոյլին:
 Գըթութիւնն ես կամ զիցուհին դուն Աթենաս,
 Որ խըբճիթին ու դամբանին կը մօտենաս,
 Եւ երբեմն ալ նոճիներուն մըշտագիշեր,
 Որոնք տըրտում են, ինչպէս մահն ու իր յուշեր:
 Դուն չես սիրեր ոսկեպաճոյճ ճոխ ապարանք,
 Ոչ թաւիչէ սըրբանախներ, ամեն պատրանք.
 Բու բըմայքդ են անտառն ու դաշտ, սարերն արձակ
 Ուր կը թողուն վանկ մը հովը, թըռչունն ու ձագ:
 Վիշտը հրապոյր մ'է բեզ համար, և փոսն ու փուլ
 Շողերուդ տակ կը փալիւլին ինչպէս սըմբուլ:
 Սիրտ մըն ես դուն, ո՛հ, գայն կը զգամ, սիրտ բերթողի,
 Երազներով, հըմայքներով ու խանդով լի,
 Կամ մայրիկիդ գիրկէն խըլուած աղջիկ մը կոյս,
 Որ բողի տակ կը պարտուրես սարսուռդ ու յոյզ,

Դուն չես խօսիր բընաւ, լուսնակ, բայց կը դիտեմ
 Թէ շատ լայէդ կը տըժգունիս առտըւան դէմ,
 Տըխուր նայուածքդ ինձ կը պատմէ առատապէս
 Թէ լոկ լոյս մը չես դուն ուրիշ գունտերու պէս:
 Բեզի նըման ես ալ ցաւեր ունիմ, լուսին,
 Ձեն հըմայեր զիս ալ կեանքի փառքերն քիւն.
 Հողիս թև մը միայն կ'ուզէ, կապոյտ փետուր-
 ճառագայթ մը բեզմէ, բեկբեկ նըշոյլ մը տուր,]
 Որուն կառչած վերսթեւեմ իրբև պարիկ
 Մինչև բիւրեղ բու ապարանքդ օղապարիկ:
 Ես բեզի ձօն տամ իմ հողիս անոր փոխան,
 Պատմէ իրեն խորհըրդատր իղձերդ համայն.
 Թ'ոչ գունտէ գունտ սաւառնելով մինչև հեռուն,
 Արցունքդ ամբողջ տանի ցըլուէ հովուն, ծովուն,
 Եւ դարերուն վըրայ կեցած միշտ անխափան՝
 Ըլլայ յաւէտ անմահ սիրոյդ բու երգաբան:



Երբ որոշում
դու քաղաք...
Մի քանի անգամ
հարցազրույց

Տարածող արքայի
ստեղծում
արքայի արքայի
հարցազրույց արքայի



ՕՐՕՐՈՒՄՆԵՐ

ԿԸ ՄԱՐԻ լոյսն անպերուն տակ երբուն.
Ա՛լ կը պարզէ կեանքի երազն իր շողին,
Խորհուրդներու մէջ փաթթելով մեր հոգին,
Դեզնած մարած նայուածքին տակ լոյսերուն:

Ա՛լ կը պարզէ կեանքի երազն իր շողին.
Մեր միտքն անդու կը թափառի միշտ հեռուն
Դեզնած մարած նայուածքին տակ լոյսերուն,
Անհոգ, անխոյժ վաղուան պէտքին ու հոգին:

Մեր միտքն անդուլ կը թափառի միշտ հեռուն
 Կապուած ծաղկին, երգին, շողին ու սիւզին,
 Անհոգ, անխոյժ վաղուան սէտքին ու հողին:

Կապուած ծաղկին, երգին, շողին ու սիւզին,
 «Վարդը փուշ է, կ'ըսենք, ձմեռն ալ՝ զարուն»
 Ու կը դիմենք զէպի անդունդը կեանքին:

1892



ՕՐՕՐՈՒՄՆԵՐ

(Վառիանդ)




ԼԵՐՍՆ ետին կը հալի զունն արևուն.
 Ըստուերները ցից սարերէն կ'իջնեն վար.
 Խառնըւելով շուշան, լելակ ամպերուն,
 Ուր կը յածին մեր անուրջներն օդապար:

Ըստուերները ցից սարերէն կ'իջնեն վար.
 Խորհուրդներու լուռ հըմայքովն ակադճուն՝
 Մեր սիրտերը կը բարախեն զերթ կիծառ
 Գըզուանքին տակ լուսնին բեհեզ ցլբերուն:

Խորհուրդներու լուռ հըմայրովն ակադճուն,
Թողած կեանքի վիշտն ու հրճուանքն անհամար
Մեր սիրտերը կը վերանան օրորուն:

Թողած կեանքի վիշտն ու հըրճուանքն անհամար
Կապուած հովին և երկինքի բոցերուն,
Երազի մէջ կը մոռնանք կեանքն ու աշխարհ:

1900



Կ Ա Պ Ո Յ Տ Ա Ղ Ջ Ի Կ Ը

ՄՈՐ ելած էր սուզէն, կապոյտ կը հագնէր.
Մըլուխն ունէր ծաւի բեհեզ մը սիրուն,
Որուն վէտ վէտ ծալքերուն նուրբ ծըփանքներ
Կ'ողորուէին շուրջն իր ոսկի մաղերուն:

Միշտ լուսեղէն ծիծաղ մ'ունէր իր բերան,
Հընչուն, անոյշ, երզի մը պէս սիրարժարծ,
Եւ խըռովիչ նայուածքին մէջ անոր լայն
Ծովն իրեն գոյն, երկինք իր շողն էր դըրած:

Սիրած չէր դեռ, ո՛հ, զայն կ'ըսէր իր ճակատ.
Չըքնաղ երազ մ'էր լոկ իր կեանքն ըսպիտակ,
Անուրջ մ'անձիր, ուր կոյս հոգին խանդակած
Կը ծածանէր ջերմ իղձերու բոցին տակ:

Բընուծեան մէջ ծովն էր իր տենչն առանձին.
Ծաղիկներուն, դաշտին համար սէր չունէր.
Ամէն առտու կարմիր արեւն այգածին՝
Իր մակոյկով ծովուն մէջ զայն կ'ողջունէր:

Ձէինք զիտեր, պըջրանք էր թէ պարզ ճաշակ
Այդ մակոյկն ալ կահուած գոյսով միշտ ծովուն,
«Կապոյտ աղջիկ» կ'անուանէինք կամ «խածակ»,
Երբ կը նաւէր փոթորկին դէմ և հովուն:

Ձեր որսար ան, և ոչ ալ զիրք կը կարդար,
Անհունին մէջ մըխըրճելով իր հոգին՝
Կ'ուզէր բաժնել շողերուն հետ անդադար
Գաղտնիքները, զոր կուտայ ծովն երկինքին:

Հովին, վիհին, ալիքներուն բարեկամ,
Յորձանքներէն, ամպէն, շանթէն չունէր վախ,
Այդ անկայուն տարրերուն մէջ շատ անգամ
Կըռուած, յաղժած էր ահպտողին ալերախ:

Բայց զիշեր մը մտտեցաւ կուր մը փուծով
Սուր ճեղքելով ծաւ ծաւ ծըփանքն ընդարձակ.
Իր առջեւէն տեսիլքի պէս հոգեծով
Լոյս ճակատ մը անցաւ գեղով համարձակ:

Լուսին տարտամ նըշոյլներուն ներքև ձիւն
Սև ու ծաւի աչքեր զիրար հասկըցան,
Եւ սիւզն աշխոյժ անոնց շունչին մեղմ հըծձիւնն
Արձագանգեց սիրոյ բառով մ'աղուածայն:

Խոժոռեցաւ խորին ծովուն զինչ երես,
Մըրրիկ մ'եւաւ, մարեց լոյսեր, կայծ ու բոց,
Լեռներու պէս վեր բարձրացան փրփրաղէզ
Կոհակներու անսանձ ամպերն հողմակոծ:

Ա՛լ հորիզոն չըկար, բառս մ'էր եծեր՝
Ճիւաղներու հանդէս մը սև ու մըռալ,
Երկինք անդուլ սուր փայլակներ կը նետէր,
Շանթ կը տեղար հընոցներէն իր շըռայլ:

Նախանձոտ ծովն յանկարծ թօմվեց իր ուսեր,
Բացաւ թեւերն առաւ աղջիկն հեշտաղին,
Անոր կեանքին հետ հրապոյրներն ալ ու սէր
Ձուգեց թողուլ կիրքերու մեծ վըտանդին:

1890





Ա Շ Ո Ւ Ն


Ա'Ն, եկնր վերջապէս, ո՛վ աշուն,
Այրի հարս վիրաւոր,
Աղջիկներ թարմ, մատղաշ ու նախշուն
Քեզ կ'անձկան, իրաւ որ:
Հողիներ ծաղկահոս երազուն
Ըզբեզ միշտ կը սպաշտեն,
Փողվելով նըշխարներդ ազազուն
Անտառէն ու դաշտէն:

Միգամած երկինքիդ տակ տըրտում
 Խաւարչուտ զիշերներ
 Ի՞նչ իղձեր, ի՞նչ խոհեր անպատում
 Կը հըսկեն անհամբեր
 Եւ երբ հովդ ըսկըսի թախել վար
 Ծառերէն տերեւներ,
 Շատ կեանքեր անոնց պէս ոգեվար
 Կը մեկնին երկրէն մեր
 Ի՞նչ ունիս դուն անոյշ և չըքնալ
 Քու բողիդ տակ թաքուն
 Որ տըժգոյն վերջալոյսդ խակ նուալ
 Ձեն փոխեր հետ այգուն,
 Ոչ ալ զօս արօտներդ անմարմանդ
 Կարմրագեղ վարդերուն,
 Պրոնց մէջ ցօղն իբրև ադամանդ
 Կը շողայ երերուն
 Քու հրապոյրդ անծանօթ է սըրտիս,
 Շընորհքիդ անտարբեր
 Քրպէս զի պըչրանքով ինձ ժըպտիս,
 Կը սպասեմ անհամբեր
 Անձրեւոտ բու աչքերդ այդ հիւանդ
 Չունին գեղ ինձ համար,
 Դալկահար չոր ճակտիդ մանաւանդ
 Ձեմ բընու սիրահար.
 Ձի հողեր քեզմէ շատ ունիմ ես
 Հողոյս մէջ հըրսխանձ

Վաղանցիկ տըրտում ինձդ ալ, զիտես,
 Ո՞հ, չ՝ազդեր ինձ նախանձ:
 Թերթերուդ մէջ ունիս դուն երբք
 Թերթեր նուրբ ու մաշած,
 Որքան թերթն իմ հողոյս աղերեկ
 Չոր վիշտերն են տաշած:
 Քու հովերդ ալ տըխտը ողբերգու
 Չայն ունին բաւական
 Իմ սըրտիս յուզումներն երգելու
 Մինչ ժայռերն ալ ըզգան:
 Հեղնուծեամբ կը նայիմ պատկերիդ
 Թախծուծեամբ լուսավառ,
 Որ արև մ'է տըժգոյն, անժըպտ
 Հողոյս բով իմ խաւար:

1890





Մ Ի Օ Ձ Օ Յ Ի Ս

Քրոջս՝ Վերգինիայից

ՆՈՐ կը լըռէր ծառին ետև,
Սոխակին երգն այն զիշերի,
Վարդին թերթերն հով մը թևթև
Թուփերուն տակ կը բըշէր՝
Ծառն ունէր շուք, երկինք նըջյլ
Լըճակին մէջ սարսըռուն,
Ուր կը պարէր սիւզն հեշտասոյլ
Հետ եթերին կայծերուն,
Հեռուն՝ զիւղին լոյսերուն վայլ,
Հոն՝ քաղաքին խօշ շըշուկ.

Մարդին վրայ գորտերուն բայլ
 Կը զըմագրէր կայծ մ'անշուք:
 Ես միայնակ լուռ և խոհուն՝
 Մոռցած աշխարհքը բոլոր,
 Ձէի ըզգար խի այն պահուն
 Թէ մասն էի զԹ անոր:
 Կ'ըղձայի վեր ելլել, միշտ վեր,
 Անպէն ալ վեր, Թռչունէն,
 Հոն ուր լոյսեր, բոյրեր, հովեր,
 Հուրեր զիրար կ'ողջունեն:
 Ո՛հ, քնչ կայ հոն, արեւ մ'անշէջ
 Ճառագայթներ, կնյծ ու ցօղ,
 Այդ անըզգայ տարրերուն մէջ
 Ձըկնց զԹ սիրտ մ'ըզգացող:
 «Միտ մը կ'ուզես, զայն ունիս դուն,
 Բու հողիէդ անբաժան,
 Հընչեց բովէս ձայն մ'եռանդուն,
 Սիրտ մ'որ բեզ չէ անարժան»
 Փոքրիկ քոյրս էր, հէք վիրդինեան,
 Գեղով փայլուն զերթ գոհար,
 Իր ձեռքին մէջ ձիւնի նըման,
 Ծաղկի փունջ մը կը զողար:
 Նուրբ ծաղիկներ էին փափուկ
 Կապոյտ, փոքրիկ, ցօղածուրմ,
 Որոնց անունն է անմոռուկ
 Յիշատակի վըսեմ բուրմ:

«Մի՛ մոռնար զիս, սոս պահէ դուն,
 Յարեց իր ձանն ինձ տալով,
 Թէ մտոդ ըլլամ և Թէ հետուն,
 Ո՛հ, միշտ յիշէ զիս սիրով:»
 Գըրբի մը մէջ պահեցի զայն
 Իբրև զանձ մը Թանկագին
 Այդ գորովոտ սիրոյն վըկան,
 Ուր ամիտիս ձէր հողին:

* * *

Դեռ կը լըսուէր ծառին ետև
 Սոխակին երգն այն գիշեր,
 Վարդին Թերթերն հով մը Թեթև
 Թուփերուն տակ կը բըշէր:
 Մինակ էի, լուռ և խոհուն,
 Բունն աչքերէս կու տար խոյս,
 Միտքըս կ'երթար հոն այդ պահուն,
 Ուր կը Թեւեն սիրտեր կոյս:
 Ու կ'իջնէի բարձունքէն վար,
 Միտքըս դատարի, սիրտս ոսին,
 Ձի երկինքի լոյսերն հազար
 Հոգւոյս ոչինչ կը խօսին:
 Գըրբի էջ մը բացի խիոյն
 Ինձ համար շատ Թանկագին,
 Եւ լեցուեցաւ հողիս անհուն
 Արցունքներով զաննագին:

Փունջը գլտայ, ո՛հ, փունջն այն սուրբ
 Այն պաշտելի ձեռքին ձօն,
 Եւ կարդայի գիրերով նուրբ
 «Զիս մի՛ մոռնար» զըրուած հոն:
 Ծառն ունէր շուք, երկինք՝ նըշոյլ
 Լըճակին մէջ սարսըռուն,
 Ուր կը պարէր սիւզն հեղատոյլ
 Հետ եթերին կայծերուն:
 Այլ, ո՛ւր իր ձեռքն, ո՛ւր իր պատկեր,
 Ո՞ւր սիրող սիրան այդ տարուկ,
 Ո՞ւր սև աչքերն իր լուսայեռ,
 Ո՞ւր անուշ ձայնն իր փափուկ,
 Արդ կը ծածկէ ցուրտ գերեզման
 Զեռքն որ տըւաւ այդ նըւէր.
 Սիրան, որ ըզգաց, ո՛հ, շնտ այնքան,
 Հողերուն տակ է սառեր:
 Եւ դուն հոս ես, միօգօրի՛ս,
 Ո՛վ իր սիրոյն սին պատկեր,
 Անոր սըրտէն ինձ կը խօսիս,
 Մինչ իր շըրճունքն է լըռեր:

1890



Հ Ո Վ Ը

ԹԱՒ Թուփերու շուքին տակ
 Զիս կը զըզուէ հոյն անհուն
 Իր մեղմ շունչով Թարմ ու տաք,

Եւ կ'օրօրուիս անյատակ
 Երազներու մէջ փայլուն
 Թաւ Թուփերու շուքին տակ:

Սոյլ մ'ունի պարզ և լըստակ
 Երբ կը խօսի ծառերուն
 Իր նուրբ ձայնովն ըսպիտակ,

Եւ շատախօս ճամարտակ,
Ա՛լ սանձ չունի իր լեզուն
Թաւ Թուփերու շուքին տակ:

Անպերն ի վար շիփ շիտակ
Կ'իջնէ սարսուռ մ'անկայուն
Իր զայրոյթէն անկատակ:

Կը Թափթըփին անգիտակ
Խեղճ ծաղիկներ ազագուն
Թաւ Թուփերու շուքին տակ:

Անդունդին ալքն ու յատակ՝
Վեր վեր ջուրերը ծովուն
Կու տան կուտակ ու կուտակ:

Կը յուզուին գետն ու վըտակ,
Խաղաղ լիճերն իսկ կ'այտնուն
Թաւ Թուփերու շուքին տակ:

Կը ցայտեն բուստ ու սուտակ
Փըրփուրներէն պարպաշուն
Ժանեակներով կապուտակ:

Եւ բաղեղն ու մատուտակ
Կը գայարին զողզողուն
Թաւ Թուփերու շուքին տակ:

Հովն, օղեղէն սուրհանդակ,
Կը ճեղքէ ծովն երերուն
Զերթ ձուկերու զուճարտակ:

Յետոյ, վախկոտ նապաստակ,
Կու գայ նիրհել լուռ, Թաքուն,
Թաւ Թուփերու շուքին տակ:

Արշալոյսին հետ խայտակ
Կ'ողջունէ դարձն արեւուն,
Ինչպէս Թըռչունն ու կուտակ:

Բայց կը մընայ յիշատակ
Հետքը իր խօլ խաղերուն,
Թաւ Թուփերու շուքին տակ:





ԺԱՆԵԱԿՆԵՐԸ

ՄԱՏ նինար է, շատ ալ տըժգոյն», կ'ըսէին,
Երբ փողոցէն կ'անցնէր երկայն մեկնոցով,
Մէջքը սեղմած լարերուն մէջ forսէին,
Աչքն ալ հովէն պատըսպարած ակնոցով:

Ծըլիկն մոյնքը բարեկամ չէր սեւերուն,
Մռ.Ս ըզգեստով անշուք աղջիկ մ'էր խոնարհ,
Սև թաւիչէ օձիքն երկար սեւեռուն
Դէմքէն ցոլբեր, ուլէն թովբեր կը գողնար:

Իր քաղաքի արդուզարդովն ապերախտ
Գեղանի չէր բընաւ այդ կի՛նն աննըման,
Զոր դիտելով խակ կ'ըլլայինք բարեբախտ
Երբոր պարի սըրահին մէջ կու գար ման:

Ի՞նչ աղուոր էր օձեակին մէջ՝ Լորր ճերմակ
 ժանեակով մը լոկ կը սքողէր իր թեւեր,
 Եւ ուսերուն, լանջքին վըրայ անդիմակ՝
 Բեհեզի մը թեթև ծալքը կը թեւէր:

Մարած, հալած երանգներու մէջ պէս պէս՝
 Իր սեփական փայլը կ'առնէր դէմքն անոր,
 Եթերային, անծիր, աննիւծ ամպի պէս
 Միշտ անմատոյց, անըլչային և միշտ նոր:

Ժանեակներու այդ փըրփուրներ թափանցիկ,
 Ծախտիքն անոնց, ցանցը բարակ օդային
 Եւ մետաքսէ ծըփանքն ալ թոյլ ցոլայիկ
 Բոլոր անձին դիւթիչ բան մը կու սայլին:

Ճառագայթ մը, լոյս մը, աւիւն մը կեանքի
 Մուծ նայուածքին մէջ հրապոյր մը կ'արծարծէր,
 Խորին անդունդ առանց երբի ու յանգի,
 Որուն զաղտնիքն ունին շանթերն ու կայծեր:

Եւ ժըղիտ մ'ալ, չըքնաղ փըթթուս մը վարդի
 Կու զար բանալ շըրթունքներուն իր թերթեր,
 Ինչպէս արեւն իր ըզզեստովը զարդի,
 Որուն առջև կը բացուին այդն ու եթեր:

Եւ կը բացուէր սիրտն երազի մը հեշտին
 Այդ ժանեակէ մը թնորտին մէջ տարտամ,
 Ձերմ, հըմայող զարկ մը տալով իր շեշտին,
 Ձոր կը պաշտէր բերթողն ու ջոջն ալ փարթամ:

Բայց ամէնուն համար սիրտն էր անտարբեր,
 Լոկ կը սիրէր պերճ ժանեակներն անսպակ,
 Որոնց հըմայքն անձրևի պէս կը թափէր
 Այնքան խունկեր, այնքան վտարգեր ոտքին տակ:

Կը փայփայէր զանոնք տենչով կամողին
 Կեանքը զըրած անոնց վըրայ հոլանի,
 Կըրքոտ սէր մը, ուր կար հանճարն ու հոգին,
 Ինչպէս գիտեն սիրել կանայք խելանի:

Սև առտու մը սակայն հագով մ'արձընցաւ
 Իր ժանեակէ լայն բարձերուն կըրթընած,
 Մէջքին վըրայ, կողին վըրայ կը զգար ցաւ,
 Ու կը հեւար յոգնած, դեղնած, բըրտընած:

Թատրոնին մէջ ցուրտ էր առեր, կը լիշէր,
 Երբ օձեակին դուռը բացուէր էր ետին.
 Դեկտեմբերի հով մը սաստիկ այն դիշեր
 Կը դըղըրդէր անդուլ երկիւնքն ու զետին:

Ու մերժեր էր առնել մեկնոցն ուսերուն,
 Իր ժանեակներն ըստուերելու երկիւղով,
 Նըշուլագեղ ոստայն հերմակ ու սիրուն,
 Ինչպէս աստղով լեցուն ձիւնէ նուրբ կողով:

Եւ մեռան ան ժանեակներուն փաթթ ըլած.
 Վերջին շունչին նետ եղաւ հուսկ իր կըտակ,
 Ժանեակներով պըծնել իր մահ, սնւ բերթուած,
 Ժանեակներով թաղել մարմինն հողին տակ:

«Ի՛նչ աղուոր է, կ'ըսէին, ինչ մանկամարդ»,
 Երբ փողոցէն կ'անցնէր դագաղն ողբական,
 Եւ երգերու, բուրվառներու մէջէն ցարդ
 Կը ժըպտէր ինք ժանեակներուն սիրական:

1892



Մ Ա Ն Կ Ի Կ Ի Ն Ք Ո Ւ Ն Շ

Մ Ի Ր Հ Է՛, մանկիկս խմ սիրուն,
 Սկեսոյշ բունով նիրհէ դուն,
 Օրբանիդ բով եկան հիւր
 Արեւն, արծիւն ու զեփիւռ,
 Թողած ծովերն, ամպն ու սար,
 Համբոյր բերել բեզ հազար:

Բացաւ արծիւն իր թեւեր
 Դըլխուդ վերե ոսկեհեր,
 Շըրթունքներուդ վըրայ նուռ
 Սըրտեց արփին վարդ և հուր,
 Եւ փայլայեց բամին զով
 Այտերդ իր նուրբ բեհեզով:

Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անոյշ քունով նիրհէ դունս
Բոյնը դարձաւ զոռ արծուին.
Մարը մտաւ լոյս արփին.
Թըռաւ զընաց իր մօր քով
Զեփուռն անհոնն նազանքով:

Սիւզին դարձին անձկայիր՝
Մայրիկն հարցուց. «Ո՞ւր էիր,
Դեւերու հետ կըռուեցար,
Յուզեցիր ծնի՞լ ու մայառս»
Իսկ համարյրով մը ջերմին
Պատասխանեց խօլ քամին.

«Ես ծառ ու ծով չեմ յուզեր,
Դեւ հալածել չեմ ուզեր.
Մանկիկին քով ամէն օր
Ըսի երգեր ու օրօր.
— Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անոյշ քունով նիրհէ դունս»

1897



ԴԱՐԱՎԵՐՁԻԿ ՀԻՒԱՆԳԸ

ԱՐԵՒՆ հասած էր սենեակին խորշերուն
Թափանցելով վարագոյրին ճեղքն ի վար,
Մինչ կանթեղին յետին նըշոյլն երերուն
Դեռ հիւանդին մահճին վըրայ կը հեւար:

Ծըփանուտ ծով մը վարսերու, մէծ հեղեղ,
Բարձին վըրայ կը թափօքլիէր իր ոսկին,
Որուն ծուփքը՝ գանգուր թելէր՝ զերթ բաղեղ
Դալարուելով կ'իյնան սր հոն սողոսկին:

Զըքնաղ ձեռքին վարդ մասներուն տակ ճաղուկ,
Կը պահուըտի դէմք մ'ա՛ս որոշ, բոլորչի,
Ինչպէս ծաղիկ մ'որ սըրահին խուսափուկ
Ըտտուերին մէջ ծըլած՝ լոյսէն կը խորչի:

Եւ կը նիրհէ. շունչը սխալի պէս բարակ
Մեղմ ու անոյշ բուրմառում մ'է բուրմունքի.
Երազային սիրոյ ցոլբեր նուրբ, արագ
Ելեւէջներ կու տան լանջրին յուզմունքի:

Անէ մ'ի վեր տառապեցաւ, հէք աղջիկ,
Ծաղկախափն սև բոցերուն մէջ հըրախանձ,
Զայն կը լըլկէր տենդը փակած զերթ ջըղջիկ
Իր լոյս մարմնոյն, որ կ'ազդէր տենչ ու նախանձ:

Մահն ալ անցաւ օր մ'իր բովէն, սեւ, խաւսր . . .
Յուրտ սարսուռ մը Թափանցեց ներս իր սըրտէն,
Եւ նուազած աչքերուն մէջ հոգեվար
Նայուածքի բոցն անհուն մարած էր արդէն,

Բայց կեանքի սէրն յաղթեց յանկարծ իր ախտին.
«Ապրի՛լ կ'ուզեմ, զոչեց, ծաղիկն եմ զարնան.
«Ես չեմ վախնար հարուածներէն չար բախտին.
«Ի զո՛ւր շանթեր զըլխուս վըրայ կը դառնան,

«Դեռ շատ կըրակ ունին աչքերս իմ ծաւի,
«Մեղրով լեցուն են շըրթունքներս հեշտաբոյր,
«Միրտս ըզգացման մեծ բեռան տակ կը ցաւի,
«Եւ այտերէս կ'առնեն վարդերն իրենց Թոյր»)

Իր բողբոջուն զեղովն այսպէս երջանիկ
Փըշրեց ոտքին տակ, ջախջախեց մահն հըղօր.
Հիմակ անոյշ ցընորքներու խաղալիկ
Քունին մէջ ոյժ, աշխոյժ կ'առնէ օրէ օր:

* * *

Արեւն հասած էր սենեակին խորշերուն
Թափանցելով վարագոյրին ճեղքն ի վար,
Մինչ կանթեղին յետին նըշոյլն երերուն
Դեռ հիւանդին մահճին վըրայ կը հեւար:

Արշալոյսէն շող մը վըրթաւ շեշտակի,
Եկաւ համբոյր մ'առնել ճակտէն այդ յըստակ,
Եւ բացուեցան աղուոր աչքեր հրեշտակի
Այդ լուսեղէն փայլախայնքին ներքև տար:

Նայուածքն յածեց մատղաղ աղջիկն հեշտօրէն
Ճոխ բարձերուն ու վերմակին սընդուսէ,
Որոնց վըրայ իր փալիւլուն մազերէն
Զանակներու յորդ անձրև մը կը հոսէ:

Ժըպիտ մ'ուղղեց ցայգազգեստին պըշրասէր,
Որ փոթթըւած վեր բաշուելով ուսերէն,
Ծալ ծալ ձիւնէ լայն բօղէքներ կը հլուսէր
Իր Թեւերուն որոնք ծաղիկ կը բուրեն:

Յետոյ ելաւ, վըրան ձըգեց վերարկուն,
Մօտենալով դարաններուն ծանրագին,
Որոնց վըրայ հըսկայ հայլին կար կանգուն
Աւանդապահ շընորհքներու հըմայրին:

Բայց . . . նազելի, ջինջ պատկերին տեղ, աւնդ,
Ծակ ծակ փորուած դիմակ մ'ելաւ իր առջին,
Ճըծինքէրէ կերուած կըմախք մը ճիւղաղ,
Ուր մեծ որդ մը կըրծած էր փոսն իր վերջին:

Հարուածն ահեղ իջաւ սըրտին իրբև լսիտ,
Ճիշ մ'արձակեց սուր, ցաւագին, աղեխարշ.
Հայելոյն դէմ զարկաւ զըլուխն իր դըժբախտ,
Արինճաճաւ ինկաւ անշունչ գետնաբարշ:

Ու վաղեցին եկան փուճով նաժիշտներ,
Արտատուալից մայրիկն հատաւ անխափան,
Ամէն կողմէ բիւր օգնուճիւն կը հասնէր.
Եւ տեղացին բըժիշկներ, ղեղ ու դարման:

Խեղճ աղջիկը բայաւ աչքերն արդէն մուճ,
Դողըղղալով չոր տերեւի պէս տըկար,
«Այ չեմ սիրեր, մըրմընջեց, կեանքն այս անգուճ,
«Ու, ալ մահուան մըրտայլ փոսէն չեմ սոսկար:

«Այլ թողէք զլս, թողէք որ շունչըս հասնի,
«Զի գերեզմանն է վայր անել ու անանց,
«Ուր հէզ դէմքըս պիտի պահեմ միշտ զաղանի
«Սև հողերուն վերմակին տակ անՊախանց»


Մահը որ հոն դարանամուտ կը սպասէր,
Տակաւ եկաւ անոր հոգւոյն բով տըրտուճ.
«— Ծաղկախոն առաւ մըրմընջեց ղեղդ ու յոյսեր՝
Պիտի տանիմ ես ալ ցաւերդ անպատուճ»

Ու անոր գիրկն ինկաւ աղջիկն հոգեվար,
Հոն իր բախտին վըրայ լացաւ ու լացաւ,
Եւ համբոյրով մ'երկայն, խորունկ, խանդավառ,
Այդ թախտուճեան հեշտանքին մէջ հալեցաւ:

Արեւն հասած էր սենեակին խորշերուն
Թափանցելով վարագոյրին ճեղքն ի վար,
Դեռ կանթեղին յետին նըշոյն երերուն
Հէք մեռելին մահճին վըրայ կը հեւար:

1892





Ա Ջ Բ Ե Ր Դ

ՍՈՎ մը կապոյտ կը ծաւալի
Աչքերուդ մէջ, ուր չըկայ սէր,
Ծով մը հանդարտ, ըզմայլելի,
Ուր կը ցոլան ցայտուն լոյսեր:
Բայց ըզգացումն հոն կը հալի
Ինչպէս տաքին՝ պատառ մը սեր:

Երբեմն անկէ կ'անցնին բարակ
Ճառագայթներ պայծառ ու ջինջ,
Ջրդուտ հոգւոյդ ցոլքեր կը ըրակ
Երեւոյթով մ'աղուոր, անջինջ:
Բայց կը մարին անոնք արագ,
Ինչպէս հովին դէմ կայծ մ'ուշինջ:

Մերձ ծաղիկներ կ'ըլլան փափուկ
 Գորշ կապոյտով մանուշակի,
 Այնքան նըրբին և խուսափուկ
 Որ չունին գոյն որոշակի,
 Բայց կը թափին ինչպէս յափուկ
 Դաժան շունչին դեմ խորշակի:

Օր մ'ալ տեսնես շատ են յոգներ
 Մեծ թափիծի խոհով մ'անանց,
 Արցունքներու տար կայլակներ
 Թարթիչներէդ կը մաղուին թաց,
 Որ կը թըլին սև ժանեակներ
 Գոհարներու շարքով բանուած:

Աշխարհներ են աչքերդ անհուն,
 Ուր կան լոյսեր, յայգեր հըսկայ.
 Սառայց, հրբղեն, բոցեր փայլուն,
 Փըզկան ու յոյս չեն բացակայ.
 Կու գան, կ'անցնին անկէ սահուն
 Գունն ու արցունք. լոկ սէր չըկայ:

1892



Հ Է՛Ք Յ Ի Մ Ա Ր Կ Ի Ն

Կը Վ.Ա.Ձ. ան, շուտ շուտ կ'երթայ դէպ ի ծով.
 Եւ անդունդին վըրայ ծըռած ծարաւի,
 Կ'ուզէ պատուել խուժն ու ծըփանքն իր կոծով,
 Ծըծել, բամել, հատցընել ծովն իւրովի:
 Կը վազէ ան, շուտ շուտ կ'երթայ դէպ ի ծով:

Թաց նայուածք մը սղօտ աչքին մէջ տարտամ
 Կը թըրթըռայ ցընցումներով թափսձաղին,
 Եւ ցաւատանջ ըզգացումներ կը կարդամ
 Անոնց յատակն ուր մոլորած է հողին:

Տենդոտ տարտու մ'ունի բերանն իր ցահար,
 Խընդուք մ'որ սև օր մ'իր բերնին է փակեր,
 Եւ խօտուածրին մէջ շեշտ մը խօլ ու ճերմակ
 Կը ծիծաղի, երբ կ'արօտուեն իր աչքեր:

Չայն մ'որ երգի կը նըմանի սըրտաբեկ
 Նիհար կուրծքէն դուրս կը թըռչի զերթ բողոք,
 Խուլ անէծք մը, զոր չէ լըսած մարդ երբեք,
 Հեծկըտուք մը և մաշող հազ մ'անողոր:

Յետոյ, յանկարծ քըրքիչ մ'անեղ, հեզնական
 Քարին, ժայռին դէմ և լոյսին, խաւարին.
 Ինչո՞ւ չեն լար անոնք կորուստն իր մանկան
 Որ ծովն ինկաւ, մեռաւ անցեալ յունուարին:

Միակ սէրն էր զոր իր զըրկէն ծովն առաւ.
 Իր կամոյն պաշտած մանկիկին այն զըւարթ.
 Վարդ մ'էր ինքն ալ. կըսկիծն ըրաւ զայն պառաւ.
 «Չէք յիմար կին» կ'ըսէ իրեն ամէն մարդ:

Չէք յիմար կին, որ կը պարէ ալ հիմակ,
 Մոռնալով ցան, անէծքն, արցունքն ու Աստուած,
 Վար կը նետէ իր վիշտերուն սև դիմակ,
 Կարծես մանկիկին հոն է լանջքին վաթճըւած:

Բայց կը վազէ նորէն կ'երթայ դէպ ի ծով,
 Եւ անդունդին վըրայ ծըռած ծարաւի,
 Կ'ուզէ պատուել խուճն ու ծըլանքն իր կոծով,
 Ծըծել, քամել, հատցընել ջուրն իւրովի:
 Ու կը վազէ, շուտ շուտ կ'երթայ դէպ ի ծով:

1892



Ա Ր Ե Ի Ո Ի Ճ Ա Ռ Ա Գ Ա Յ Յ Ը

Գ Լ Ի Ա Ր Յ առտու մը զարնան,
 Երբ խուցիս բողբ
 Փեղկերը նոր կը բանան,
 Ճառագայթ մ'աղուոր,
 Արեւէն թեւ մը փըրթած
 Յուլբերով ոսկի:
 Դեռ գիշերուան ցողէն թայ,
 Ներս կը սողոսկի.
 Եւ սահեալով պատերուն
 Ճերմակ ձեւին ի վար:

Նազանքներով օրորուն՝
 Շողալով վառ վառ՝
 Կը սխի սխի մը դառնալ,
 Պար մը խօլ, թեթև,
 Ու կը փախչին շուքերն ալ
 Բարձերուն ետև
 Ճառագայթն արշաւատոյր
 Անիւններ չունի,
 Սակայն փափուկ լուսամոյր
 Թև մ'է թըւչունի:
 Իր խաղն աղուոր է այնքան
 Եւ այնքան սիրուն,
 Որ խորհուրդ մը խօրական
 Կ'ունենամ խօլոյն:
 Կ'ուզեմ բըռնել ոսկեթել
 Լոյսիկն այն բարակ,
 Շիշի մը մէջ բանտարկել
 Իր կայծերն արագ,
 Մինչև տըխուր ձըմեռ գայ
 Երկինքն ըլլայ մուծ,
 Լեցուի դաշտը շըրջակայ
 Զուրերով տըղմուտ:
 Եւ ձանձրոյթի սև օձեր
 Երբ հողի տանջեն,
 Իմ ճառագայթս հանեմ վեր,
 Սըրուակին մէջէն,

Որ գայ սխի, ծիծաղի
 Իմ շուքս հեզանազ
 Մինչև հողերս անտեղի
 Փըշրին զերթ աւագ:
 Ու ետեւէն վազելով
 Շողիկիս պըջրուն,
 Որ խոյս կու տար ինչպէս հով
 Շուքը մոմերուն,
 Բազմոյներէն կ'ելլէր վեր
 Անկողնիս կատար,
 Եւ յետոյ վար կը ցատկէր
 Ու կը կայծիլտար:
 Կարձես վըրսս կը խնդար,
 Ու կը խարէր զիս,
 Հիւ գալով շուքն անդադար
 Գըլխուս և վըզիս:
 Ես կ'ընէի ամէն ջանք
 Զինքը բըռնելու,
 Իսկ ան կու տար ինձ տանջանք
 Փախչելով հետուս
 Վերջապէս ձեռքս ինկաւ
 Լոյսիկն անապակ,
 Զոր փակեցի ըշտապաւ
 Նեղ շիշի մը տակ,
 Ու պահեցի փամթեղով
 Թուղթերու մէջ հաստ

Որ չըթըռչի ինչպէս հով
 Շողիկս անըզգաստ:
 Երբոր ձըմեռը եկաւ,
 Ամպերը սեւցան,
 Հոծ սաղարթներն ալ կարգաւ
 Եղան ցիր ու ցան,
 Օր մը, երբ սիրտս էր կտորած,
 Եւ անձրև կու գար,
 Յիշեցի շողըս յանկարծ
 Եւ խօշ մեր պայքարս
 Բացի սըրուակս անհամբեր,
 Ի՛նչ տեսնեմ, աւանդ,
 Մէջէն թըռեր, փախեր էր
 Շողիկըս չըքնադ:

1900



Յ Ո Ւ Կ Ե Ր

ԵՌՈՂՆՆ, հեռուն, լուրժ մըշուշին ծալքին տակ,
 Թըրթըռացող աղօտ լոյսին պէս անուշ,
 Նայուածքներ կան մերձ արցունքոտ, մերձ յըստակ,
 Որ կը յուզեն կեանքիս իղձերն ինձ անյուշ:

Պուրակին թօշ ըստուերներուն տակ մըթին,
 Ուր զեփիւռներ ծաղիկներուն կ'այցեւեն,
 Ուր բուրմանց թարմ ծխածաններ կը փըթթին,
 Միշտ կը գըտնէ հողիս յուշիկ մ'անցեալէն:

Հայն հոսանք մը՝ որ ծոպերով լուսածիր
 Կը կոծկոծի տրտրելով սարէ սար,
 Յուզմունք մ'ունի, տենդ մը վազքին մէջ անձիր,
 Ուր կը յիշեմ մըտքի ծըփանքս իմ հաղար:

Ճապաւէնի գոյն մը կարմիր կամ դեղին
 Կապուած աղուոր, փափուկ վըզի մը ճերմակ,
 Բոց մը կու տայ հողույս մարած կանթեղին,
 Ուր երագիս թոյրերն հալած են հիմակ:

Իրիկուան դէմ պայծառ օղին մէջ ծաւի,
 Զըւարթ սոյլեր կը սըլուըլան ինձ ի զո՛ւր.
 Տըխուր վանկ մը, հեւք մը, հըծծիւն մը ցաւի
 Լուկ սըրտիս մէջ իր արձադանգն ունի սուր:

Առտըւան մտտ, խաւարտներու մէջ տաին,
 Կամ ծորի մը հոծ թուփերուն մէջ թառած,
 Յայտ մը ցօղի, շաղի կամ իլ մը, մհ, սին
 Ինծի համար աւցուների շի՞ծ մ'է ստուած:

Գիշերուան լուռ ժամերուն մէջ թախտալից
 Ազուաներու ձայներն հովէն երբ կ'ուռին
 Դողդըղաւով, միշտ մըտածել կուտան ինձ
 Հիւանդի մը, իր հուսկ անեղ սարսուռին:

Ծովն ու երկինք և տեսիլներ անհամար,
 Կեանքն՝ ուր մարդիկ տենդով կու լան կը խընդան,
 Յիշատակներ են հողեցունց ինձ համար,
 Ուր կ'ապրի սիրտս անուրջներով անկենդան:

1893



Ի Տ Է Ա Լ Ը

ԼՈՒՍՆԻՆ շողն է զոր կը մարէ շուտ արվին,
 Հուր երագ մը որ այգուն դէմ կը դեղնի,
 Փայլակն է այն շանթին վաղանց զարնայնի,
 Ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին:

Հուր երագ մը որ այգուն դէմ կը դեղնի,
 Ծիածանին լոյս ժապաւէնն է նըրբին,
 Ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին,
 Լուրթ կամարին հիւսիսայցն է ծիրանի:

Ծիածանին լոյս ժապաւէնն է նըրբին,
 Փըշոտ վարդ մը որմէ լանջըրդ կ'արխնի,
 Լուրթ կամարին հիւսիսայցն է ծիրանի,
 Միշտ փըշըրդ ձիւն փըրփուրն է բարափին:

Փըշուտ վարդ մը որմէ լանջըըզ կ'արխնի,
Փետուր մըն է թըռած կուրծքէն կարապին,
Միշտ փըշըըտոյ ձիւն փըրփուրն է քարափին,
Ինչ որ հովը, օղը, ջուրը կը տանի:

Փետուր մըն է թըռած կուրծքէն կարապին,
Սուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի,
Ինչ որ հովը օղը, ջուրը կը տանի,
Իտէալն է՝ օրօրն հոգւոյն մըրափին:

Սուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի,
Կոյան անմատոյց բոց տենչերու տարափին,
Իտէալն է՝ օրօրն հոգւոյն մըրափին,
Խըռովիչ հոյլն անուրջներու պատանի:

Կոյան անմատոյց բոց տենչերու տարափին,
Ըզմեզ կեանքին կապող ոսկի մատանի,
Խըռովիչ հոյլն անուրջներու պատանի,
Սիրոյ երգը սըրտի խորունկ պարապին:

1898



Ա Ն Ց Ն Ե Լ Ո Ւ Մ Օ Տ

Լ ՈՅՍՍ՝ փունջ մը, շող շուղերու կուռ հիւսկէն,
Հորիզոնէն վար հուր և բոց կը թափէ,
Լերան ծայրը ցոլքեր մուծը կը պըրկեն
Յանցի մը մէջ լայն վերտերով սատափէ:

Քունէն զարծած կ'երգէ մարին, վարուժան
Ոստերն ի վար կախուած բոյնին մէջ տամուկ,
Դաշտերուն մէջ հոյլ հոյլ գառներ կը խըժան
Շաղով օծուած մարմանդներուն մէջ ճամուկ:

Շամբերուն հոծ շուրին տակէն դողողուն՝
Դէպ ի ծովուն ափերն ի վար աւազէ,
Ուր փըրփուրին կը նըշմարես վախկոտ չուն,
Լուսածիձաղ առուն վէտ վէտ կը վազէ:

Ոչ հըմայքէն առուին տենդոտ կարիազին,
Շողին, ցողին լոյս ծիծաղէն արծաթի,
Ոչ ալ այգուն ջերմ համբոյրէն առաջին
Մեր սըրտին մէջ վարդ անուրջ մը կը ծաօթի:

Մենք չենք սիրեր կեանքն յորդաշունչ, կենդանի,
Անցնելու մօտ իրերն ըզմեզ կը կարթեն.
Ու կը ցաւինք, երբ բաղդն հեռու կը տանի
Ինչ որ երկի արհարմարհած ենք արդէն:

Մենք կը սիրենք, երբ արեւը ծիրանի
Հաւած, հատած մով նըման ողբվար՝
Ալիքներուն գոգն խնալով շիջանի
Սողոսկելով խորակներէն զառ ի վար:

Ծաղիկները, զոր կը թողունք որ ցամբին
Թճնուտ օղին, ցուրտ արեւուն տակ աշնան,
Ծառաներու յանձնած կողխտ խընամբին,
Թողմելու մօտ՝ կարծես յանկարծ կ'անուշանն:

Սըրտակները, որոնց լոյրը կը հատնի,
Ալ աւելի մեզ սիրելի կը դառնան,
Ինչպէս դեղնած սիրոյ թըղթիկ մը գաղտնի,
Ջոր կը սլահենք զուրգուբանքով անսահման:

Եւ մեր սէրը, սսկիւնետուր թըռչուն բիւ,
Ջոր անսըւաղ կը լըբանենք շատ հեղ մենք,
Երբ թև կ'առնէ կ'ուզէ մեզմէ խուսափել,
Դողըզզալով մեր հոգւոյն մէջ կը սեղմենք:

Մըրմունջները որոնք հեռուն կը մարին՝
Կոչնակները, հաչիւնն անգամ շուներուն,
Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,
Մեկնելու մօտ՝ հըմայք մ'ունին օրօրուն:

Յուզմունքներն ալ կը վըրդովէն մեր հողին
Եթէ չըլլան երազի պէս թեւաոր.
Եւ կեանքն արդեօք կ'ըլլայ այնքան թանկագին,
Այնքան անուշ, երբ չըսպառնայ մահն անոր:

1900






Ս Ի Ր Ո Յ Յ Ն Ո Ր Ք Ն Ե Ր

ՉԵՐՄԱԿ փլըրիւր փետուրներով աղանիները կ'անցնին,
կ'անցնին կ'երթան հոյլ ի հոյլ,
Եթերին մէջ Թափձ ըփելով անբիծ անուրջը ձիւնին,
Կոյս անուրջներ լուսածոյլ՝
Ամպին տակէն մուծ ազուաներ սև մարմաշով փաթձ ըւած՝
Վար կը սուրան երկինքէն,
Աղջամուղջ Թեւերովնին տես կանգ կ'առնեն, ով Աստուած,
Ու կառաչներ կ'արձակեն՝
Շառ վարդերէն անուշաբոյր Թարմ շափրակներ կը Թափին
Վէտվէտումով ծիրանի,

Եւ ծաղկագեղ բեհեզ սլըտակն այերահիւս ու նըրբին
 Հովը իր հետ կը տանի,
 Ձոր տերեւներ գօս, ցեցակեր, բըզըխտուած ու կարկամ
 Կետնին վըրայ դեփ դեզին
 Թուփերուն տակ կը մընան միշտ, իբրև յետին բարեկամ
 Փարած հողին ու ցեխին
 Ժըպիտները ճառագայթէ փըթթուններով՝ կը մարին
 Շըրթունքներու վըրայ լուռ,
 Հընչուն ծիծաղը արծաթի մինչև հասնի կամարին
 Կ'ըլլայ փըշուր ու փըշուր
 Կեղը, լոյսը, շափիւղաներն ու զինչ լոյսերը շուշան,
 Սիրոյ հաւատքն անվըթար,
 Կապոյտ օրերը զարունին, կեանքի զըրգանքն անսահման
 Երազներ են մեզ համար,
 Յըրտացումներ, մոռացումներ, սիրոյ սրտրանքն անաւոր,
 Եւ վարանքներն ու կարօտ,
 Հրամեշտի ցան ու լըբումներ, սիրոհատնումներ ամէն օր
 Պիտի մընան մեզի մօտ:

1902



Ի Ն Զ Ո՞ Ի

ԻՆՁՈ՞Ւ կը խօսիս, ինձ կը հարցընեն,
 Սըրտէն եկածը չի հաներ բերնէն
 Խոհեմ անձն, ըլլա՛յ ծաղկահաս կամ ծեր,
 Ինչո՞ւ կը խօսիս ինձ կը հարցընեն,
 — Ինչո՞ւ . . . բայց, ինչուն ես ալ չեմ գիտեր,
 Անսրտոյը գիտէ կը գոռայ ինչու-
 Ինչո՞ւ կը հոսին, կը սուրան գետեր,
 Կամ կը սըլանայ Թըռչնիկն օդաչու,
 Ինչո՞ւ . . . բայց, ինչուն ես ալ չեմ գիտեր:

Ինչո՞ւ կը խընդաս, ինձ կը հարցընեն,
 Երբ միշտ ձանձրոյթ կայ յատակն իրերուն,
 Երբ ծաղիկները կը սառին ձիւնէն,
 Եւ այնքան կարճ է մեր կեանքին զարուն:
 Ինչո՞ւ կը խընդաս, ինձ կը հարցընեն,
 — Լերան կատարներն ինչո՞ւ են ճերմակ,
 Մինչ ոտքերնուն տակ ցելխէն կը նեղուինք:
 Անոնք ուրախ են, կը խընդան համակ
 Մարտը ճակատնին ուղղելով երկինք:
 Լերան կատարներն ինչո՞ւ են ճերմակ:

Ինչո՞ւ զուարթ ես, կ'ըսեն ինձ շատեր,
 Կեանքն հրապոյր չունի, և աշխարհքն է սուտ:
 Չես տեսներ սըրտիդ հանոյքն է հատեր,
 Եւ շուքն ու պերճանք ուրուներ են զուտ:
 Ինչո՞ւ զուարթ ես, կ'ըսեն ինձ շատեր,
 — Գիտէ՞ լըճակը ինչու կը ցոլայ,
 Երբ արեւն իր մէջ կ'արձակէ ճաճանչ,
 Երբ այդն իր ցօղը կամ է արժամեայ
 Ինչո՞ւ կը ժըպտին արիերը կանանչ,
 Գիտէ՞ լըճակը ինչու կը ցոլայ:

Ինձ կը հարցընեն. ինչո՞ւ կը սիրես,
 Երբ կեանքէդ ինկան այնքան թարմ թերթեր,

Երբոր խոյս տըւաւ բու սիրոյդ երազ,
 Եւ ըզձանքներդ ալ կ'ըլլան տարուբեր,
 Ինձ կը հարցընեն. ինչո՞ւ կը սիրես:
 — Հարցուցէք շիւղին հողին մէջ յուռթի:
 Ինչո՞ւ չի ցամբիր անձրեւներէն վերջ:
 Հարցուցէք. աղբիւրն ինչո՞ւ կը յորդի
 Երբոր սահանքներ կը հոսին իր մէջ:
 Հարցուցէք շիւղին հողին մէջ յուռթի:

Հարցուցէք զաշտին հասկերուն դողողոջ
 Ինչո՞ւ կ'օրորուն ու կը վէտվէտին,
 Ինչո՞ւ ծառերը կ'արձակեն բողբոջ
 Սօս եղեւինէն մինչ պըտերն յետին:
 Հարցուցէք զաշտին հասկերուն դողողոջ:
 Ինչո՞ւ. ո՞՞, ինչուն ես ալ չեմ գիտեր,
 Բայց կ'ուզեմ խօսիլ, երգել անխընայ,
 Յօրդ, անդուլ ինչպէս կը գըլին գետեր,
 Եւ խընդալ կեանքի անուրջին վըրայ:
 Ինչո՞ւ. ո՞՞, ինչուն ես ալ չեմ գիտեր:

1902





Կ Ի Թ Ա Ռ Դ

Մայրիկիս

Երբ սարսուռ հեծր մը սաւաննի կիՍառի,
Բուրումները եՍերին մէջ երբ հեւան,
Շըղարչ մըջուն երբ ծածանուտ Սափառի,
Եւ Սըրչըւած շաղ աբյունքէն գիշերուան
Երբ ըստուերին մըռայլ ծոցին մէջ Սառի,

Բուրումները եՍերին մէջ երբ հեւան
Հիւանդի մը շունչին նըման զողջուն,
Որ կը հեծէ հուսկ եղերերդը մահուան,
Մըտքէս խոհեր կու գան կ'անցնին զերՍ Սըրչուն,
Ինչպէս կ'անցնի անապատէն կարաւան

Նըզարչ մըշուշն երբ ծածանուտ թախառի
 Ըսրողելով աչքէս թախիժը մուծին,
 Սըրտիս մօտիկ կըզգամ հրեշտակ մը բարի,
 Որուն ձայնէն սէր և գորով կը կաթին,
 Հոգիս յուզուած երազներուս կը վարի:

Եւ թըրջըւած շաղ արցունքէն զիշերուան,
 Անոյշ աչքեր՝ չար գորովով բարաստուն՝
 Կի՞թառի մը ձայնէն կ'ելլեն երեւան
 Բերելով ինձ յուշեր անեզր ու անհուն,
 Որոնք եղան յաւէտ հոգւոյս օժեւան:

Բայց ըստուերին մըռայլ ծոցը կը թառի
 Կարօտակէզ թիրոյս երազն այս պատիր:
 Մահուան խոհին մէջ եռանդըս կը սառի:
 Եւ երկիւղած քեզ կ'աղօթեմ ձերաղիր
 Երբ սարսուտ հեծք մը ստուանի կի՞թառի:

1902



Ա Ռ Ռ Ա Կ Ը


Ա Ռ Ռ Ա Ա Կ Ն յուշիկ կը հոսէ,
 Պրիամակէ
 Ճերմակ ծոցեր ու ծաւի
 Ծածանելով զրասանգներնին մետաքսէ
 Արեւուն դէմ
 Կը բեկբեկին, կը հալին:
 Փուն իր լօռուս պըտերները ժողկելով
 Անոր ծամբայ
 Կը բանայ:
 Եւ հիրիկներն ու մարմանդ
 Յոյլ կը պառկին ջուրին երեսն աղամանդ,
 Վէտկէտուամով սընդուսէ:
 Փունչ փունջ արծաթ ցըրցըքնումներ թըրթըրուն
 Ափերն ի վեր կը ցայտեն,
 Հուսկ կ'անձրեւեն,
 Ինչպէս հըրթիւ մը օդին մէջ ծիածան
 Յիր ու ցան:
 Եւ կ'ոլորուին այդ ասուպները շըղտորչ:

Յետոյ Թեւ Թեւ կը ճըղուին
 Մեղեխիկի, զըմբուխտի, կարկեհանի ցոլքերով
 Աղուոր բըմշոտ մանեակներ
 Կ'երթան ուլերը զարդարել ծաղիկներուն
 Կարկառուն:

Այլ յանկարծ կը տարտըզին հովը վըջէ երբ ուժղին.
 Բայց առուն
 Կը թաւալի, կը զըլղըլի ու կ'երթայ:
 Փըրփուրներուն ոչ տարիանքներն ու յայժիւ,
 Հարսնուկներուն ոչ նազանքները պըջրտ,
 Ոչ ալ յորձքը ալիքներուն ու կայտիւ
 Կըմնան ըլլալ խոչընդոտ
 Իր հոսանքին:

Այսպէս կեանքը կը սահի մերձ ծիծաղով, մերձ կոծով,
 Մեր բերկրանքը, մեր եռանդը, սէրն ու զուժ
 ձիշտ ստուակին
 Փըրփուրներուն կը նմանին,
 Որոնք կըմնան ըլլալ կայոյտ
 Եւ կամ մուծ,
 Ականակիտ կամ տըղմուտ.
 Դիպուածով
 Կըմնան պոռժկալ կամ նիւրճել
 Դիմնչև առուն զանոնք իր հետ տանի ծով:

1902



Բ Ա Ղ Ե Ղ Ը

(Մանկուրեան Յիւսակ)

ԲԱՂԵՂ մ'ունէի պատուհանիս բով,
 — Պարտէզով փակուած տունը մեր գեղին, —
 Որ եթերին մէջ կ'օրրէր նազանքով
 Իր ծաղիկները կայոյտ ու գեղին:

Լայն տերեւները թաւշի պէս կանանչ
 Փունջ փունջ կ'իյնային բարձերուս վըրան,
 Եւ սաղարթներուն մէջէն զերթ ճաճանչ,
 Կը նըշմարէի դպրոցիս ճամբան:

Ժառագէնի պէս կ'երկարէր հետուն
 Յորեններու մէջ այդ ուղին ճերմակ,
 Ուր կը ծըփայլին անուրջներ գարուն
 Եւ հիր հարսնուկներ շափրակ ու շափրակ:

Պատերուն խորքը, ձերպերու մէջ լայն,
 Մոռ Պաւուտներու ներքե Պանծրախիտ,
 Թափած բուրդերու թելերովն երկայն
 Բոյն կը շինէին սարեակն ու խայտիտ:

Ճառագայթներով, բուրմունքով, խանդով,
 Առարկաներով սիրուած, մըտերիմ
 Եւ գուրգուրանքով հիւսուած հողեծով
 Կ'երեւար կեանքը ինձ մինչև շիրիմ:

Բայց սերենները դալկացան տակաւ,
 Եւ քամին Պափեց ձաղխին ու փետուր,
 Թըռչուններն հոյլ հոյլ հեռացան կարգաւ.
 Ձիւնով ծածուկ է պարտէզն ու կըտուր:

Թարմ բաղեղին տեղ պատուհանիս քով
 Յից պատ մը կ'ելլէ սառչիս դեփ դեղին,
 Ձոր կը բաղդատեմ աղի արցունքով
 Ճերմակ ճամբուն հետ մեր տանը զեղին:

1888



Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ը

Գ ԻՇԵՐ մէն էր լուսընկայով անըստուեր,
 Ծոփն էր տափարակ,
 Մտն անձրեւի պէս շիժ շիժ վար կը մաղուէր
 Թելերով բարակ,
 Կ'աշխատէի պատուհանիս առջև բայ
 Վիժակներու տակ,
 Երբ թիժեռնիկ մը ցուրտ ցօղէն թըրջըւած
 Ներս մըտաւ շիտակ,
 Ու Սօժվելով նուրբ թեւիկները նարօտ
 Թուղթերուս վըրան,
 Եկաւ առջիս դըրաւ բընբոյջ ու սարսուռոտ
 Իր փոքրիկ իրան:

Լուսամետրիս վարդ շիրակէն երանգուած
 վառ վառ ծիրանի,
 Նախ նարնջի, հուսկ շառագոյն պերճ կիտուած
 Դարձաւ հոլանի,
 Եւ ուրունքներ բոյլ բոյլ՝ բոլորքը թեւին
 Ու մանրիկ զըլխուն
 Կը դընէին խորունկ հըմայքը սեւին
 Լոյսով փողփողուն:
 Իր մինինիկ նուրբ տոտիկները ծածուկ
 Բերաւ բովէ բով,
 Եւ ըսկըսաւ աշուկներովը սեւուկ
 Դիտել վարանքով
 Բեկբեկ լոյսը, ծըծելով ցոլքը բուրվառ
 Կարմիր լամպարին,
 Որ բուստ ճեղեղ մը կը ծորէր վերէն վար
 Հանդարտ ու լըսին:
 Յետոյ, առջիւ պարզեց իր գեղը բոլոր,
 Յակինթ ու զանակ,
 Որ կը ցայտեն թռչիւններէն իր կըլոր
 Սիրուն գարգմանակ:
 Ըսքանչացած այդ հըմայքոտ պըչքանքէն
 Կը նայիմ իրեն.
 Ի՛նչ աղուր է երանգներուն իր հիւսկէն,
 Թեւերն ալ հիր են:
 Կը մըտաձեմ չոր փունջի մը կիսաւարտ,
 Ծաղիկներու կարծ,

Յ Ե Ը

Ուր գետեղել չեմ յաջողած զոյգ մը վարդ
 Մասներովս անվարժ,
 Թիթեռնիկը, նըրբին գոհար պերճանքի
 Իմ փունջիս վըրայ,
 Ասեղի մը ճարմանդին տակ փանաքի
 Պիտի թըրթըռայ,
 Քօղահեղձի, շիւղէ ծոպի մը միջէ՛
 Հուրի թեւաւոր,
 Իրեն թաւշոտ փետուրներովը թեթեւ
 Կիսի պէս աղուր,
 Կեանք պիտի տայ չորցած փունջիս իմ նիհար
 Փակած կոշտ թուղմին,
 Եթէ դընեմ լոռուտ խորք մ'ալ՝ դալիահար
 Թերթերուն ետին:
 Այսպէս երազ մը սըլայիկ տարաւ զիս,
 Ծաղիկներուն ծոց,
 Որոնց կըզգար անոյշ բերթուածը հողիս
 Եւ վայելքն ալ հո՛ծ,
 Երբ լամպարէն խանձած ինկաւ անկենդան
 Թեւերը կախած
 Հէք թիթեռնիկս, որուն գեղովը այնքան
 Սիրտս էր բարախած:

1902




Ամսը	9
Սօսին սակ	11
Մեհասանին կոչը	17
Երկինք	19
Խունկը	23
Լուսին	25
Օրորումներ	29
Օրորումներ (Վառիանդ)	31
Կասպոյս աղջիկը *	33
Ս.Շուկ	37
Միօգօրխ	41
Հովը	45
Ժանեակները	49
Մանկիկին բունը (Հեռեւորումներ)	53
Գարավերջիկ հիւանդը	55
Աչեւոյ	61
Հէ'ք յիմար կին	63
Արեւու ճառագայրը (Հեռեւորումներ)	65

Յուշեր	69
Իսկար	71
Անցնելու մօս	73
Սիրոյ ցնորհներ	77
Ինչո՞ւ	79
Եկրտադ	83
Սուտակը	85
Բարեկը (Մանկութեան յիշատակ)	87
Թիրևանիկը	89



معارف نظارت جلیلهی و مطبوعات اداره بهیهی رخصتیله
 طبع و نشر اولمخندر فی ۱۸ نیسان سنه ۱۳۱۸





Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the cursive style and bleed-through.

Handwritten text in Armenian script, possibly a list or a set of instructions. The text is written in a cursive hand and is partially obscured by the binding of the book.

Handwritten text in Armenian script, continuing the list or instructions. The text is written in a cursive hand and is partially obscured by the binding of the book.

Handwritten text in Armenian script, likely a signature or a note at the end of the page. The text is written in a cursive hand and is partially obscured by the binding of the book.



55765